



**«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵԶ  
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

№ 004 20 հունվարի 2021թ

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ի  
Ընդհանուր ժողովի 2021թ. հունվարի 20-ին տեղի ունեցած թիվ 4 նիստի**

**Ք.Երևան**

Առաջնորդվելով «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ի կանոնադրության 7.3 կետի «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի հիմնադիր Մ.Նանյանի հրավերով տեղի ունեցավ Քոլեջի Ընդհանուր ժողովի հերթական նիստը:

Քոլեջի Ընդհանուր ժողովի աշխատակարգի 5 կետի առաջին ենթակետի համաձայն՝ Ընդհանուր ժողովի նախագահ Մ.Նանյանը բացելով նիստը, նախ ողջունեց բոլոր մասնակիցներին, շնորհավորեց նոր տարվա կապակցությամբ և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2020 թվականի բյուջեի կատարողականի և 2021 թվականի բյուջեի նախագծի հաստատման մասին:

**(Ձեկուցող՝ Հաշվապահ Ս.Հովակիմյան):**

2. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ներքին նորմատիվ փաստաթղթերի ընթացքի մասին:

**(Ձեկուցող՝ ՄՌԿ և Ընդհանուր բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար,  
հաշվապահ՝ Ս. Հովակիմյան):**

3. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի մասին:

**(Ձեկուցող՝ Տնօրենի տեղակալ՝ Ն. Եգորյան):**

1. **Լսեցին՝** Հաշվապահ Ս.Հովակիմյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ֆինանսատնտեսական հարցերի, 2020 թվականի բյուջեի կատարողականի և 2021 թվականի բյուջեի նախահաշվի հաստատման վերաբերյալ:

Ս.Հովակիմյանը ներկայացրեց 2020թ. բյուջեի կատարողականը նշելով, որ այս հարցը հանգամանորեն քննարկվել է Տնօրինական խորհրդում և Ընդհանուր ժողովի նախագահ Մ.Նանյանի հետ: Ս.Հովակիմյանն ամփոփ ներկայացրեց բյուջով նախատեսված ծախսերը, որոնք հիմնականում կատարվել են (հիմք՝ 2020թ. կատարողական): Հաջորդիվ, Ս.Հովակիմյանը նշեց, որ 2020թ. բյուջեի համալրումը իրականացվել է ամբողջական, ուսման վարձերի գանձման ընթացքը և արդյունքները դանդաղ են ընթացել, այնուամենայնիվ հավաքագրումը եղել է 100%: Ուսանողների մեծ մասի մոտ եղել են ուսման վարձավճարների պարտքեր: Ամբիոնների վարիչների, ուսանողական խորհրդի և ուսումնական մասի միասնական ջանքերով հավաքագրումը իրականացվել է ամբողջությամբ:

Հաշվետու տարվա ընթացքում եղել են բյուջեով նախատեսված որոշ խնայողություններ, որոնց հաշվին առաջարկեց 2021 թվականի բյուջեի նախահաշվի նախագծում «Զարգացման ֆոնդ» հոդվածի 15%-ը ավելացնել ևս 5%-ով:

Հիմնավորելով նման առաջարկը, Ս.Հովակիմյանը մեջբերում կատարեց Քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի նապատակ 3-ի 6-րդ կետը: Պլանավորված ավելացումներով մինչև ՌԶԾ-ի ավարտը Քոլեջի «Զարգացման ֆոնդի» բյուջեն կհասնի մոտավորապես 30%-ի:

### **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

Ընդհանուր ժողովի նախագահ Մ.Նանյանը նշեց, որ համաձայն գործող ՌԶԾ-ի նախատեսվում է համալիր միջոցառումներ, մասնավորապես՝ 2022-2023 ուստարվանից կազմակերպել օտարերկրյա քաղաքացիների ընդունելություն «Քույրական գործ» մասնագիտությամբ: Ինչպես պլանավորված է Քոլեջի ՌԶԾ-ով, առնվազն մեկ ԿԾ-ի կազմակերպում օտար լեզվով, որը հնարավորություն կտա Քոլեջին ապահովել ֆինանսական կայուն միջոցների հոսք: Աստիճանաբար արդիականացնելով և բարելավելով Քոլեջի նյութատեխնիկական ռեսուրսները, հնարավոր կլինի «Զարգացման ֆոնդի» աստիճանաբար ավելացման միջոցով, իրականացնել հստակ և համալիր ծրագրեր:

## **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Քուլեջի 2020 թվականի բյուջեի կատարողականը գնահատել բավարար:
2. Հաստատել Քուլեջի 2021 թվականի բյուջեի նախագիծը:
3. Հանձնարարել տնօրեն Ի.Վարդանյանին իրականացնել վերահսկողություն բյուջեյով նախատեսված հոդվածների արդյունավետ կատարողականի համար:

**2. Լսեցին՝** Քուլեջի ՄՌԿ և Ընդհանուր բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, հաշվապահ՝ Ս. Հովակիմյանի ելույթը «Գրիգորիս» բժշկահումանիտար քոլեջում ներքին նորմատիվ փաստաթղթերի ընթացքի վերաբերյալ:

Ս. Հովակիմյանը իր ելույթում ներկայացրեց քոլեջում շրջանառվող ներքին նորմատիվ փաստաթղթերի ցանկը և մի քանի նոր փաստաթղթեր, որոնք մշակվել և հաստատվել են Տնօրինական խորհրդի կողմից:

Ամփոփելով ելույթը Ս. Հովակիմյանը ներկայացրեց այն փաստաթղթերը, որոնք քննարկվել և հաստատվել են 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում («Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման» ընթացակարգ և «Առարկայական/մոդուլային դասընթացի ուսումնական ծրագիր կազմելու» կարգը):

## **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝**

Ընդհանուր ժողովի նախագահ Մ.Նանյանն իր ելույթում նշեց, որ Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին ընդառաջ խիստ անհրաժեշտ էին նմանատիպ նորմատիվ փաստաթղթերի մշակումը և գործարկումը:

Ընդհանուր ժողովի նախագահ Մ.Նանյանը դիմելով Լ.Հարությունյանին և Ս. Հովակիմյանին՝ խնդրեց Ընդհանուր ժողովի հաջորդ նիստին ներկայացնել Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն:

## **ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնին և ՈԱ պատասխանատուին Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի նախատարաստական աշխատանքների վերաբերյալ պատրաստել կատարողական զեկույց և ներկայացնել Ընդհանուր ժողովի հաջորդ նիստին:

**3. Լսեցին՝** Տնօրենի տեղակալ Ն. Եգորյ անի «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի վերաբերյալ:

Տնօրենի տեղակալ Ն. Եգորյ անը ներկայացրեց 2019-2024թթ. ՌԶԾ-ի պլան ժամանակացույցով կատարված աշխատանքները, համաձայն հաստատված վերջնարդյունքների: Ամփոփելով ելույթը, Ն. Եգորյ անը ներկայացրեց նաև ՌԶԾ-ի ԳԱՑ-ին համապատասխան ընթացիկ՝ 2020-2021 ուստարվա աշխատանքների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն, հավելեց նաև, որ ուսումնական տարվա վերջում կներկայացնի կատարողական զեկույցը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել տնօրեն Ի.Վարդանյանին Ընդհանուր ժողովի հաջորդ նիստին ներկայացնել կատարողական զեկույց:

Նախագահ՝

Մ.Նանյան

Քարտուղար՝

Հ.Գրիգորյան